ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«6» մայիսի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ _____ Մ. Անանյան

ԳԲԽ-42/16 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Խաչպար» ՍՊԸ-ի 22.04.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. **«Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 22.04.2016թ. ներկայացրած բողոքով «Խաչպար» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար բժշկական սարքավորումների, գործիքներ և

պարագաների ձեռքբերման նպատակով «ՇՀԱՊՁԲ-15/16-13-2016(ԵՊԲՀ)» ծածկագրով ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) հանձնաժողովի 2016թ. ապրիլի 16-ի թիվ 1 որոշմամբ հաստատվել է հրավերը, որով հայտերի բացման նիստը նշանակված է եղել 2016թ. ապրիլի 15-ին ժամը 10:00-ին:

«Խաչպար» ՍՊԸ-ն հայտնել է, որ գրանցված է որպես «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16» ծածկագրով ընթացակարգի հնարավոր մասնակից, սակայն սահմանված կարգով չի ստացել Պատվիրատուի կողմից նշված ծածկագրով ընթացակարգ հայտարարելու մասին ծանուցումը:

Այլ մասնակիցների կողմից տեղեկանալով Ընթացակարգի հայտարարման մասին, «Խաչպար» ՍՊԸ-ն փորձել է գտնել նշված ծածկագրով հայտարարությունը և հրավերը www.gnumner.am ինտերնետային կայքում, սակայն նշված ծածկագրով հրավեր չի հայտնաբերվել:

ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 37-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ գնումների հայտարարության և հրավերի կամ նախաորակավորման հայտարարության տեքստերը, իսկ շինարարական ծրագրերի գնման դեպքում նաև ծավալաթերթ-նախահաշիվը, ներառյալ ըստ աշխատանքների կատարման արժեքները, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի սահմանած կարգով հրապարակում է www.gnumner.am ինտերնետային կայքում:

Կարգի նույն կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերը, էլեկտրոնային եղանակով, միաժամանակյա ծանուցմամբ ուղարկվում է նաև օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «ա» ենթակետի համաձայն հրապարակված շրջանակային համաձայնագրեր կնքած բոլոր մասնակիցներին, եթե գնումը կատարվում է շրջանակային համաձայնագրերի միջոցով: Ըստ Ընկերության՝ Պատվիրատուի կողմից խախտվել են Կարգի 37-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջները, քանի որ www.gnumner.am համացանցային կայքում պատշաճ ձևով չի հրապարակվել «ՇՀԱՊՁԲ-15/16-13-2016(ԵՊԲՀ)» ծածկագրով ընթացակարգի հրավերը, միևնույն ժամանակ չի ապահովվել նույն որոշմամբ սահմանված՝ տվյալ ծածկագրի ներքո գրանցված բոլոր հնարավոր մասնակիցների միաժամանակյա ծանուցման պահանջը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Խաչպար» ՍՊԸ-ն Պատվիրատուի ոչ պատշաճ գործողությունների արդյունքում զրկված է եղել տվյալ ընթացակարգին մասնակցելու հնարավորությունից, Ընկերությունը ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ և 10-րդ հոդվածներով՝ խնդրել է դադարեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի Ընթացակարգ հայտարարելու մասին 06.04.2016թ. թիվ 1 որոշումը:

Ընկերությունը հայտնել է, որ քանի որ Պատվիրատուի կողմից նշված ծածկագրի ներքո ոչ մի հրապարակում www.gnumner.am համացանցային կայքում առկա չէ և Ընկերությունը հնարավորություն չունի հասկանալու, թե տվյալ պահին Ընթացակարգն ինչ փուլում է գտնվում, կա արդյոք պայմանագիր կնքելու մասին որոշում, թե ոչ, ուստի հիմք ընդունելով Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին կետը՝ խնդրել է կիրառել ժամանակավոր միջոց և արգելել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հետագա որոշումների, մասնավորապես պայմանագիր կնքելու մասին որոշման կայացումը և պայմանագրերի կնքումը:

2. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը 04.05.2016թ. թիվ 09/649 գրությամբ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է, որ բժշկական սարքավորումների, գործիքներ և պարագաների գնման նպատակով կազմակերպվել է «ՇՀԱՊՁԲ-15/16-13-2016 (ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

Պատվիրատուն հայտնել է, որ 2016թ. ապրիլի 6-ին ժամը 15:00-ին կայացված նիստում գնահատող հանձնաժողովի կողմից հաստատվել է Ընթացակարգի հրավերի տեքստը:

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը նշել է, որ ղեկավարվելով Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասով և Կարգի 37-րդ կետով սահմանված պահանջներով՝ Ընթացակարգի հրավերը հրապարակվել է

www.gnumner.am համացանցային կայքում, որի արդիականության ժամկետ է սահմանվել 07.04.2016թ մինչև 15.04.2016թ. ժամը 10:00-ն ներառյալ: Հրավերն էլեկտրոնային եղանակով միաժամանակյա ծանուցմամբ ուղարկվել է Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «ա» ենթակետի համաձայն հրապարակված շրջանակային համաձայնագրեր կնքած բոլոր մասնակիցներին՝ apranq-15-16@shh.gnumner.am էլեկտրոնային փոստի միջոցով:

Հայտերի բացման նիստը տեղի է ունեցել 15.04.2016թ. ժամը 10:00-ին: Վերոհիշյալ գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել թվով 21 մասնակից: Հայտերի լիարժեք և ամբողջական գնահատման նպատակով գնահատող հանձնաժողովի նիստն ընդհատվել է և շարունակվել է 19.04.2016թ. ժամը 12:00-ին:

Կարգի 47.1-րդ կետի դրույթներին համապատասխան՝ հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակվել է www.gnumner.am համացանցային կայքում և միաժամանակյա ծանուցմամբ ուղարկվել է վերոհիշյալ գնման ընթացակարգին հայտ ներկայացրած բոլոր մասնակիցներին:

Օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի և Կարգի 44-րդ կետի դրույթներին համապատասխան՝ գնահատվել են մասնակիցների կողմից ներկայացված հայտերը և 2016թ. ապրիլի 19-ի ժամը 12:00-ին կայացած նիստում ամփոփվել են գնահատման արդյունքները և հայտարարվել են առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցները:

Պատվիրատուն հայտնել է, որ Կարգի 47-րդ կետի դրույթներին համապատասխան՝ 20.04.2016թ. հարցում է ներկայացվել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 2.3 կետի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Միաժամանակ, ծանուցվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

3. <u>ԳԲԽ-42/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-42/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից բժշկական սարքավորումների, գործիքներ և պարագաների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՇՀԱՊՁԲ-15/16-13-2016 (ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

2. Պատվիրատուի կողմից Ընթացակարգի հրավերը սահմանված կարգով հրապարակվել է տեղեկագրում՝ www.gnumner.am համացանցային կայքում:

3. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից Կենտրոնին է տրամադրվել Պատվիրատուի 06.04.2016թ. marketing.ysmu@gmail.am էլեկտրոնային փոստի հասցեից հրավերը (ծանուցումը) միաժամանակյա ծանուցմամբ բժշկական սարքավորումների, գործիքներ և պարագաների ձեռքբերման «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16» ծածկագրով ընթացակարգի ավտոմատ ծանուցման apranq-15-16@shh.gnumner.am էլեկտրոնային փոստի հասցեին՝ շրջանակային համաձայնագրեր կնքած բոլոր մասնակիցներին ուղարկված նամակի քաղվածքը:

4. «Խաչպար» ՍՊԸ-ն 04.05.2016թ. Կենտրոնին ներկայացված դիմումով խնդրել է 22.04.2016թ. ներկայացրած ԳԲԽ-42/16 բողոքը թողնել առանց քննության:

4. <u>ԳԲԽ-42/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, հիմք ընդունելով «Խաչպար» ՍՊԸ-ի 04.05.2016թ. Կենտրոնին ներկայացված դիմումը, առաջարկում է «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից բժշկական սարքավորումների, գործիքներ և պարագաների

ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՀԱՊՁԲ-15/16-13-2016 (ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ հայտարարելու մասին 06.04.2016թ. թիվ 1 որոշումը դադարեցնելու պահանջի մասին «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 22.04.2016թ. ներկայացված բողոքը թողնել առանց քննության:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ՝ Մ. Կատվալյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-42/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գրիգորյան